ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Անալիտիկ» ՓԲԸ

08. 06. 2018 թ.

տարեկան ընդհանուր ժողովի կողմից

Ժողովի նախագահ՝ ՀՀ ԷԵԲՊ

նախարար Ա. Գրիգորյան

«ԱՆԱԼԻՏԻԿ»՝ ՓԲԸ

2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

-ԵՐԵՎԱՆ -

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Տեղեկատվություն Ընկերության, նրա կառավարման մարմինների և ենթակառուցվածքների մասին

2. Արտադրական գործունեություն

3. Ֆինանսատնտեսական գործունեություն

4. Աշխատանք և աշխատավարձ

5. Եզրափակիչ դրույթներ

6. Հավելվածներ

I. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անվանումը՝	
հայերեն լրիվ	«Անալիտիկ» փակ բաժնետիրական ընկերություն
կրճատ	«Անալիտիկ» ՓԲԸ
ռուսերեն լրիվ	Закрытое акционерое общество <Аналитик>
կրճատ	ЗАО <Аналитик>
անգլերեն լրիվ	<Analitic> closed joint-stock company
կրճատ	<Analitic> CJSC
հասցեն	ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 29, 0012
հեռախոսը	(+37410) 275073
հարկային մարմինում գրանցման համարը	00000749
«Անալիտիկ» ՓԲԸ հաշվարկային հաշվի համարը՝ Արդշինբանկ	247010000526
Պետ.ռեգիստրում գրանցման ամսաթիվը	12.02.2009թ.
Գրանցման համարը	26414000773
Վկայականի թիվը	01 Ա 008033
Իրավակազմակերպական ձևը	փակ բաժնետիրական ընկերություն

Ընկերության կանոնադրական հիմնադրամի մեծությունը կազմում է 10970000 դրամ, բաժնետոմսերի քանակը 47 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսեր: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 233404 դրամ:
Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորված անձի ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի կողմից:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացմամբ շահույթի ստացումը:

Իր առջև դրված նպատակներն իրականացնելու համար Ընկերությանը զբաղվում է տնտեսական գործունեության հետևյալ հիմնական տեսակով՝
օգտակար հանածոների հանքավայրերի հայտնաբերման և հետազոտման նպատակով արշավախմբերի կողմից ներկայացրած երկրաբանական նմուշների համալիր հետազոտում,

Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ դրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի պայմաններով նախատեսված է, որ Ընկերությունը, բացի լիցենզավորվող գործունեությունից, չի կարող զբաղվել այլ գործունեությամբ, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության այլ տեսակներով զբաղվելու վրա, ապա Ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվելու այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով չարգելված գործունեության:

Ընկերությունն ունի «Որակի բնագավառում քաղաքականություն»:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1.Բաժնետիրոջ ընդանուր ժողով՝ Ընկերության կառավարման բարձրագույն մարմին

Աշոտ Մանուկյան - ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար, ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնող

2.Ընկերության միանձնյա գործադիր մարմին՝

Սուսաննա Հովսեփի Սարգսյան - ընկերության գլխավոր տնօրեն -

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Անալիտիկ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է ՀՀ բնապահպանության նախարարության 26.12.1997թ. N 135 որոշման համաձայն, «Անալիտիկ» ՊՓԲԸ «Կենտրոնական լաբորատորիա» պետական ձեռնարկության վերակազմավորման ճանապարհով: Ընկերությունը հանդիսանում է «Կենտրոնական լաբորատորիա» պետական ձեռնարկության իրավահաջորդը (վկայական 01Ա008033, գրանցման թիվ 264.140.00773): ՀՀ կառավարության 15.05.2008թ. թիվ 653-Ն որոշմամբ «Անալիտիկ» ՊՓԲԸ-ի բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին: Ընկերության 30.12.2008թ. արտահերթ ընդանուր ժողովում ընկերությունը վերանվանվել է «Անալիտիկ» ՓԲԸ:

Ընկերության կանոնադրությունը իրավաբանական անձանց պետռեգիստրի Արաբկիրի տարածքային բաժնում գրանցվել է 12.02.2009թ.:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկերության տնօրինության տակ է գտնվում լաբորատոր նպատակներով կառուցված շենքը, որը շահագործման է հանձնվել 1970 թվականին, և կից հողատարածքը:

ՀՀ կառավարության 21.05.1998թ. թիվ 311 որոշման համաձայն ընկերությանը պետական սեփականության իրավունքով տրամադրվել է անշարժ գույքի սեփականության (օգտագործման իրավունքի գրանցման վկայական, որը գրանցվել է անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 1-2 մատյանի 0000054 համարի տակ, իսկ 12.07.2017թ. վերագրանցվել N 12072017-01-0254 համարի տակ:

Շենքի ընդանուր մակերեսը կազմում է 4732.4 քառ. մետր, իսկ հողամասի չափը՝ 0.42 հա:

II. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի ընթացքում «Անալիտիկ» Փակ Բաժնետիրական Ընկերությունն աշխատել է 2 մասնագիտացված լաբորատորիաներով՝

1. ֆիզ -քիմիական մեթոդներով հետազոտման լաբորատորիա
2. քիմիական և ոչ հանքային հումքի լաբորատորիա

Լաբորատոր աշխատանքների ծավալը, դրամական արտահայտությամբ (առանց ԱԱՀ-ի) կազմում է 101067.0 հազ դրամ, նախահաշվով նախատեսված 94500.0 հազ դրամի փոխարեն: Ըստ մասնագիտացված լաբորատորիաների կատարված աշխատանքների ծավալը հետևյալն է.

N	Մասնագիտացված լաբորատորիա	2017թ. կատարված ծավալը (մլն դրամ)	2017թ. կատարված ծավալը /նմուշ/
1.	Ֆիզ-քիմիական մեթոդներով հետազոտման լաբորատորիա	38.04	3804
2.	Քիմիական լաբորատորիա և ոչ հանքային հումքի լաբորատորիա	63.03	4731
	Ընդամենը	101.07	8535

Ընդերքի հետ կապված երկրաբանական խնդիրների լուծումն անհնար է առանց լաբորատոր ուսումնասիրությունների, քանի որ այդ արդյունքների շնորհիվ է հնարավոր հաստատել հետազոտվող օգտակար հանածոների որակական ու քանակական բնութագրերը, քիմիական կազմը և դրանց արդյունաբերական օգտագործման ուղիները: Լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքը՝ երկրաբանական աշխատանքների հայելին է, ուր յուրաքանչյուր անալիտիկ տվյալ իր արտացոլումն է գտնում այդ աշխատանքների արդյունավետության մեջ:

«Անալիտիկ» ընկերության տեխնիկական զինվածությունը, կադրերի բարձր որակավորումը և ժամանակակից այնպիսի անալիտիկ մեթոդների կիրառումը՝ ինչպիսիք են ատոմային-աբսորբցիան, թերմոգրավիմետրիան, ինֆրակարմիր սպեկտրոսկոպիան, թերմիկան, դիֆրակտոմետրիան, և այլն, հնարավորություն են տալիս լաբորատոր հետազոտությունները կատարել պատշաճ մակարդակով, ապահովելով վստահելի անալիտիկ տեղեկատվություն երկրաբանական աշխատանքների ցանկացած փուլում:

Լաբորատոր հետազոտությունների հիմնական առարկաներն են հանդիսանում բազմամետաղ, սուլֆիդային, պղնձային, պղնձակոլչեդային, պղնձամոլիբդենային

հանքանյութերը, սիլիկատային լեռնային ապարները, խմելու, ոռոգման և հանքային ջրերը, շինանյութերը և այլն:

Հաշվետու տարում ընկերության նմուշների պատրաստման բաժնում ձեռք բերվեց և տեղադրվեց օդամղիչ նոր կոմպրեսոր, ֆիզ-քիմ. մեթոդներով հետազոտման լաբորատորիայի համար ձեռք բերվեց CHOL տիպի մուֆելային վառարան և սելիտային տաքացուցիչներ: Անալիտիկ սարքավորումների սենյակը համալրվեց «Բերգ» և «Էլեկտրոլյուքս» ընկերությունների արտադրության սառը և տաք օդամղիչ սարքերով: 2017 թվականի ընթացքում Գերմանական նշանավոր TÜV NORD ընկերություն կողմից անցկացվեց «Անալիտիկ» ՓԲԸ-ի Որակի կառավարման համակարգի հերթական աուդիտը, (սկսած 2011թվականից), որի արդյունքները մեկ անգամ ևս հաստատեցին լաբորատորիայի որակի համապատասխանությունը Միջազգային ստանդարտի պահանջներին:

1. Ֆիզ-քիմիական մեթոդներով հետազոտման լաբորատորիայում կատարվում են թանկարժեք մետաղների պարունակության որոշումներ՝ տարբեր անալիտիկ մեթոդներով:

2. Քիմիական և ոչ հանքային հումքի լաբորատորիայում լաբորատորիայում կատարվում են սև, գունավոր, հազվագյուտ ու ցրված, ալկալիական մետաղների սիլիկատների, ջրերի նմուշների քիմիական հետազոտումներ: Կատարվում են երկրաբանական նմուշների (լեռնային ապարներ, շինանյութերի) ֆիզիկական և մեխանիկական փորձարկումներ: Արդյունքների հիման վրա տրվում է եզրակացություն, որտեղ նշվում է հետազոտված նմուշների համապատասխանությունը ստանդարտի պահանջներին և նպատակային օգտագործման հնարավորությունները:

III. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2017 թվականին ընկերության տարեկան եկամուտը հիմնական գործունեությունից կազմել է 101067.0 հազ. դրամ: Նշված եկամուտի գոյացման աղբյուրներն են մասնագիտացված լաբորատորիաների կողմից կատարված երկրաբանական նմուշների լաբորատոր հետազոտումները:

Այլ եկամուտը կազմել է 8841.0 հազ. դրամ, որից՝ գործառնական վարձակալություն՝ 7686.0 հազ. դրամ, ֆինանսական ներդրումներից /ավանդ/, բանկի

տոկոսներից ստացված և այլ եկամուտ՝ 1155.0 հազ դրամ: Ընդամենը համախառն եկամուտը կազմել է՝ 109908.0 հազ. դրամ:

Իրացված աշխատանքների ինքնարժեքը կազմել է 70382.0 հազ. դրամ, վարչական ծախսերը՝ 26002.0 հազ. դրամ, գործառնական այլ ծախսերը /հարկեր և այլ /1332.0 հազ. դրամ: (հավելված 1):

Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումները կազմել են 70020.0 հազ. դրամ:

2017թ. ընկերությունը ապահովել է շահույթ՝ 12192.0 հազ. դրամի:

Ընդհանուր ծախսերի մեջ առանձին ծախսային հոդվածների համամասնությունը տոկոսային արտահայտությամբ կազմում է՝

հազ. դրամ

Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ	70020	71,7%
Հումք և նյութեր	9853	10.1%
Հիմնական միջոցների վերանորոգման, սպասարկման ծախսեր	1488	1.5%
Հիմնական միջոցների ամորտիզացիա	9121	9.3%
Այլ ծախսեր	5922	6.1%
Հարկեր	1312	1.3%
Ընդամենը	**97716**	**100%**

Ընկերության ակտիվների կառուցվածքում ոչ ընթացիկ ակտիվները կազմում են 92.1 %:

Սեփական կապիտալը կազմում է 840741.0 հազ. դրամ և կազմում է հաշվեկշռի պասիվային մասի 79,7%: Կանոնադրական կապիտալի զուտ գումարը կազմում է 10970.0 հազ. դրամ:

Շահութահարկի գծով ծախսը կազմել է 2839.0 հազ. դրամ: Զուտ շահույթը շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո կազմել է 9353.0 հազ. դրամ:

IV. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2017թ. ընթացքում ընկերության փաստացի աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմել է 23 մարդ: 2017թ. ընթացքում աշխատանքի են ընդունվել 4 մարդ, աշխատանքից ազատվել՝ 6 մարդ:

Մասնագիտական որակավորում պահանջվող աշխատողների 100 %-ը ունեն համապատասխան բարձրագույն կրթություն:

2017թ. ընթացքում աշխատողներին վճարված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարները կազմել են 70020,0 հազ. դրամ, միջին աշխատավարձը կազմել է 253.7 հազ. դրամ:

Ընկերությունում գործում է «Անալիտիկ» ՓԲ ընկերության աշխատողների վարձատրման և խրախուսման կանոնակարգը:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2017թ. ընթացքում ընկերությունը երկրաբանական նմուշների լաբորատոր հետազոտումներ կատարելու համար կնքվել են պայմանագրեր 16 ընկերությունների հետ, ինչպես նաև համապատասխան պայմանագրեր են կնքվել Ընկերության արտադրական գործունեության անխափան ընթացքը ապահովող տարբեր կազմակերպությունների հետ:

2017թ. ընթացքում նախատեսված բոլոր հարկերը յուրաքանչյուր ամիս, օրենքով նախատեսված ժամկետներում, վճարվել են պետբյուջե:

2017թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ ընկերությունում անց է կացվել ընկերության հաշվեկշռում արտացոլված ակտիվների և պարտավորությունների գույքագրում, որի արդյունքներն արտացոլվել են 2017թ. տարեկան հաշվետվություններում: Ընկերությանը հասցված վնասի, անօրինական դուրս գրումների, վճարումների և ծախսերի դեպքեր, ինչպես գույքագրման արդյունքներով, այնպես էլ տարվա ընթացքում չեն արձանագրվել:

«Անալիտիկ» ՓԲԸ
գլխավոր տնօրեն — Ս. Սարգսյան

Հավելված1

Հաշվապահական հաշվեկշռի N2 Ձև-ի բացվածք

		հազ. դրամ
տող 010	Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ծառայությունների իրացումից հասույթ	101067
•	*երկրաբանական նմուշների հետազոտումից հասույթ*	*101067*
տող 020	Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	70382
•	*արտադրական աշխատակազմի աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ*	*46843*
•	*նյութական ծախսեր /նյութեր, արագամաշ առարկաներ/*	*9736*
•	*արտադրական նշ. հիմն. միջոցների նորոգման, սպասարկման ծախս*	*1488*
•	*մաշվածություն*	*9121*
•	*էլ. էներգիա*	*1961*
•	*այլ ծախսեր / ջուր, այլ/*	*1233*
տող 050	Վարչական ծախսեր	26002
•	*վարչական անձնակազմի աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ*	*23176*
•	*գործուղման ծախսեր*	
•	*փոստի և հեռահաղորդակցության ծախսեր*	*546*
•	*գրասենյակային, կոմունալ ծախսեր և այլ*	*741*
•	*բանկային ծառայության ծախսեր, ապահովագրական ծախսեր*	*36*
•	*աուդիտորական, գնահատման ծառայության ծախսեր*	*1145*
•	*այլ ծախսեր / տույժ և այլն/*	*358*
տող 070	Գործառնական այլ եկամուտ	7686
•	*վարձակալություն*	*7686*
տող 080	Գործառնական այլ ծախսեր	1312
•	*հարկեր /հողի հարկ, գույքահարկ/*	*1312*
տող 130	Այլ ոչ գործառական շահույթ (վնաս)	1135
•	*ընկերության դրամական միջոցները բանկում ներդնելու արդյունքում /ավանդ/ ստացված տոկոսներ և այլն*	*1155*
•	*Փոխարժեքի տարբերություն*	*(20)*
տող 160	Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	12192
տող 170	Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	2839
տող 180	Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	9353

«Անալիտիկ» ՓԲԸ
գլխավոր տնօրեն

Ս. Սարգսյան